ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 26-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընդլայնված նիստ, որին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը (ատենապետ), Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Տ. Զավեն արքեպս. Չինչինյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը, պրն. պրն. Արմեն Բարսեղյանը, Հակոբ Փափազյանը, Պիոն Հակոբյանը և Պարգև Շահբազյանը (քարտուղար):

Նիստին հրավիրված էին նաև Տ. Տիրայր արքեպս. Մարտիկյանը, Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Տ. Նարեկ եպս. Ծաքարյանը, Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը:

Նիստի մասնակիցները, ի թիվս օրակարգում դրված այլ հարցերի, քննարկեցին նաև Հայաստանյայց Եկեղեցու եպիսկոպոսաց ժողով հրավիրելու հարցը: Այդ կապակցությամբ որոշվեց 1988 թ. հոկտեմբեր ամսին Մայր Աթոռում գումարել եպիսկոպոսաց ժողով՝ հիմնավորապես քննարկելու համար Հայ Եկեղեցու առաջ ծառացած մի շարք հրատապ հարցեր, ինչպես՝

ա. Հայ Եկեղեցու կանոնադրության հարց:

բ. Կուսակրոնության կարգի վերաբերյալ հարցեր:

գ. Դիակիզման հարց:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱՒԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌՋԵՎ

(26 սեպտեմբերի 1988 թ.)